

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐԾՈՒՅՑԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԸ

24.11.2021 17:48



2021 թվականի նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար ամեն տարի կազմակերպվող մրցույթի գրավոր փուլը:

Մրցույթին մասնակացելու համար դիմել են 27 փաստաբաններ:

Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները կհրավիրվեն հարցազրույցի և մրցույթը հաղթելու դեպքում կընդգրկվեն հանրային պաշտպանի թեկնածուությունների համալրված ցուցակում որում ընդգրկված փաստաբանների շարքից պետք է կատարվեն նշանակումներ:

Հիշեցնենք, որ 2022 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը հայտարարել է մրցույթ`

1) քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար` Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար.

2) քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար` Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար:

